ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է

1) տատանումների ուժգնությունից
2) տատանումների թափից
3) տատանումների հաճախականությունից
4) տատանումների տևողությունից

2 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր
2) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
3) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
4) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն

3 Մեծ սեքստան կազմված է

1) 7 աստիճանից և 5.5 տոնից
2) 6 աստիճանից և 5 տոնից
3) 6 աստիճանից և 4.5 տոնից
4) 7 աստիճանից և 6 տոնից

4 Մծ.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
2) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
3) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
4) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից

5 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
2) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
3) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
4) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով

6 Մեծացրած սեքստակորդի կառուցվածքն է.

1) փքց.4 + մ.3
2) մ.3 + մծց.3
3) մծց.4 + փ.3
4) մք.4 + մ.3

7 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

8 D_2 - ը կառուցվում է

1) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
2) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
3) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
4) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3

9 VII_7- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) մ.3 + փ.3 + փ.3
2) փ.3 + փ.3 + փ.3
3) փ.3 + մ.3 + փ.3
4) փ.3 + փ.3 + մ.3

10 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
3) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
4) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2

11 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) տոնայնություն
2) հնչյունաշար
3) գամմա
4) արպեջիո

12 Համանուն տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

13 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) $6^{-}, 7^{-}$ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
2) 6^{+} աստիճանը
3) 7^{+} աստիճանը
4) $6^{-}, 7^{-}$ աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս

14 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փոյուգիական
2) Իոնական, Կրկնակի հարմոնիկ, Դորիական
3) Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
4) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական

15 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) $6^{-}, 7^{-}$ աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
2) $6^{+}, 7^{+}$ աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
3) $6^{-}, 7^{-}$ աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
4) $6^{+}, 7^{+}$ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս

16 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) ռիթմ
2) մետր
3) չափ
4) տակտ

17 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
2) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
3) սեքստոլը, կվինտոլը, տրելը
4) սինկոպան, տրիոլը, կվարտոլը

18 Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր տակտերից
2) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից
3) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
4) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից

19 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) տակտերի քանակն է
2) հնչյունների քանակն է
3) պարզ չափերի քանակն է
4) նոտաների քանակն է

20 նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս մեծ օկտավայի ֆա նոտայի տեղը
2) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
3) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
4) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի ֆա նոտայի տեղը

21 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրել
2) տրիոլ
3) տրեմոլո
4) տրիո

22 Հետևյալ տերմինները՝ **Prestissimo**, **Agitato**, **Amoroso**, **Doloroso, Brilliante** նշանակում են (ըստ հերթականության)

1) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
2) ծայրահեղ արագ, հուզված, սիրով, թախծալի, փայլուն
3) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
4) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր

23 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) լայն և խառը
2) խիտ, լայն և խառը
3) խիտ և լայն
4) խիտ և խառը

24 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) կանոն
2) կոնտրապունկտ
3) իմիտացիա
4) ֆուգա

25 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն և ազատ
2) հնագույն, խիստ և ազատ
3) հնագույն, խիստ և խառը
4) հնագույն, խառը և ազատ

26 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման.

1) ABCBA
2) ABACA
3) ABCAB
4) ABACAB[1]A

27 Հայ ժողովրդական երաժշտության ճյուղերն են.

1) տաղային արվեստ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
2) հոգևոր երգ, գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ
3) գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
4) գեղջկական երգ, քաղաքային երգ, հոգևոր երգ

28 Հայ ժողովրդական երաժշտությունը

1) հարմոնիկ է
2) պոլիֆոնիկ է
3) հոմոֆոն է
4) մոնոդիկ է

29 Հայկական նոտագրության ստեղծողն է.

1) Համբարձում Լիմոնջյանը
2) Կոմիտասը
3) Գաբրիել Երանյանը
4) Նիկողայոս Թաշչյանը

30 Հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգերը ձևավորվում են

1) տետրախորդների շղթայման սկզբունքով
2) տետրախորդների հաջորդման սկզբունքով
3) օկտավաների շղթայման միջոցով
4) տրիխորդների հաջորդման սկզբունքով

31 Հորովելները

1) պարերգեր են
2) կանանց աշխատանքային երգեր են
3) պանդխտության երգեր են
4) տղամարդու աշխատանքային երգեր են

32 Ո՞ր շարքում են միայն հայ գեղջկական երգի ժանրեր

1) հայրենասիրական, ռոմանս, օրորներ
2) աշխատանքային, ծիսական, պանդխտության
3) աշխատանքային, ծիսական, դրամատիկական
4) Անտունիներ, օրորներ, քայլերգեր

33 Սանթուրը ժողովրդական նվագարան է,

1) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
2) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
3) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
4) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք

34 Ո՞վ է հայկական քանոնի դպրոցի հիմնադիրը.

1) Խաչատուր Ավետիսյան
2) Անժելա Աթաբեկյան
3) Ծովինար Հովհաննիսյան
4) Ալվարդ Միրզոյան

35 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ թառահար.

1) Ջիվան Գասպարյան
2) Հովհաննես Դարբինյան
3) Մարտին Խաչատրյան
4) Իլյա Մինասյան

36 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ ուդահար.

1) Վաչե Հովսեփյան
2) Հովհաննես Դարբինյան
3) Մարտին Խաչատրյան
4) Միհրան Դեմիրճյան

37 Ո՞վ է «Ծամերով պարի» հեղինակը

1) Խաչատուր Ավետիսյան
2) Ծովակ Համբարձումյան
3) Գրիգոր Հախինյան
4) Արզաս Ոսկանյան

38 Նշվածներից ո՞րն է Սայաթ- Նովայի երգը.

1) Նազանի
2) Ախ, Մարալ ջան
3) Լեպհո լե-լե
4) Նա մի նազ ունի

39 Ո՞ր գործիքներն են կազմում Սազանդարների խումբը.

1) քամանչա, դուդուկ, դափ
2) քամանչա, թառ, դափ
3) քամանչա, թառ, դհոլ
4) դհոլ, զուռնա, դուդուկ

40 Ո՞վ է Արևելյան ժողգործիքների սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիրը.

1) Արամ Մերանգուլյան
2) Վարդան Բունի
3) Սաշա Օգանեզաշվիլի
4) Ալեքսանդր Սպենդիարյան

41 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Բարսեղ Կանաչյան
2) Ռոմանոս Մելիքյան
3) Կոմիտաս
4) Տիգրան Չուխաջյան

42 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Առնո Բաբաջանյան
2) Գրիգոր Եղիազարյան
3) Ալեքսանդր Հարությունյան
4) Արամ Խաչատրյան

43 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Էդվարդ Միրզոյան
2) Անուշավան Տեր-Ղևոնդյան
3) Ղազարոս Սարյան
4) Տիգրան Մանսուրյան

44 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) պոլիֆոնիկ
2) պուանտիլիստական
3) մոդալ
4) դոդեկաֆոն

45 Ո՞վ է հայկական առաջին քառաձայն պատարագի հեղինակը.

1) Արմեն Տիգրանյան
2) Մակար Եկմալյան
3) Կոմիտաս
4) Քրիստոփոր Կարա-Մուրզա

46 Գրիգոր Նարեկացին առավել հայտնի է իր

1) տաղերով
2) շարականներով
3) երգերով
4) սաղմոսներով

47 Ավետ Տերտերյանի ո՞ր սիմֆոնիայի կազմի մեջ են ներառվել ազգային փողային գործիքներ.

1) թիվ 8
2) թիվ 3
3) թիվ 7
4) թիվ 1

48 Ո՞ր բալետում է Էդգար Հովհաննիսյանն օգտագործել ժողովրդական մեղեդիներ.

1) «Երկնագույն նոկտյուրն»
2) «Ժաննա դ՛Արկ»
3) «Անտունի»
4) «Հավերժական կուռք»

49 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Ֆերենց Լիստ
2) Յոհաննես Բրամս
3) Ֆրանց Շուբերտ
4) Ֆելիքս Մենդելսոն

50 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործության.

1) «Խովանշչինա»
2) «Իվան Սուսանին»
3) «Եվգենի Օնեգին»
4) «Կատերինա Իզմայլովա»

51 Երգեհոնը

1) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
2) ստեղնաշարային լարային գործիք է
3) ստեղնաշարային-փողային գործիք է
4) ստեղնաշարային գործիք է

52 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական պարերի» հեղինակը.

1) Ռոբերտ Շուման
2) Ֆելիքս Մենդելսոն
3) Ֆերենց Լիստ
4) Յոհաննես Բրամս

53 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում ռոմանտիզմի շրջանին.

1) Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ
2) Յոհաննես Բրամս
3) Ֆերենց Լիստ
4) Ֆրանց Շուբերտ

54 Ո՞վ է «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Դոն Կառլոս» օպերաների հեղինակը.

1) Ջուզեպպե Վերդի
2) Ջոակինո Ռոսսինի
3) Վինչենցո Բելլինի
4) Ջակոմո Պուչինի

55 Դմիտրի Շոստակովիչի թիվ 7-րդ սիմֆոնիան գրվել է. . .

1) 1937թ. ստալինյան բռնությունների օրերին
2) 1-ին աշխարհամարտի օրերին
3) 1917թ. հեղափոխության օրերին
4) 2-րդ աշխարհամարտի օրերին

56 Նշվածներից ո՞րը Ղ. Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի մաս չի կազմում.

1) «Արևային պեյզաժ»
2) «Գառնի»
3) «Հին Երևան»
4) «Մայրամուտ»

57 Ո՞վ է «Սայաթ-Նովա» օպերայի հեղինակը.

1) Էդգար Հովհաննիսյան
2) Ալեքսանդր Հարությունյան
3) Արամ Խաչատրյան
4) Տիգրան Մանսուրյան

58 Նշվածներից ո՞ր վոկալ շարի հեղինակն է Ռոմանոս Մելիքյանը.

1) «Հայրենիքի ջրեր»
2) «Զմրուխտի»
3) «Խոհեր»
4) «Երազ օրեր»

59 Լյուդվիգ վան Բեթհովենի ո՞ր սիմֆոնիայում է հնչում երգչախումբ.

1) թիվ 9
2) թիվ 6
3) թիվ 3
4) թիվ 7

60 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը չի գրել սիմֆոնիա.

1) Ֆրանց Շուբերտ
2) Յոհաննես Բրամս
3) Ռոբերտ Շուման
4) Ֆրեդերիկ Շոպեն